Հավելված 2

Նկար 1: Եր. Մելիք, Պրոլետարական գրականության ճամբաները, Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, հունիսի 14, № 130:

Հավելված 2



Մեր մէջ ստեղծագործում է քաղմու...

6 ... 1922 թ.
Երևան

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆԵՐԸ

Մեր լրագրի այսօրվա համարում տպագրվում է մի չափազանց հետաքրքիր դոկումենտ այն իմաստով, որ նա թե անպայմանելի մի նորութիւն է մտցնում մեր գրական կեանքում և թե շատ շատերի փայփայած կուռքերին տալիս է ճշմարտութեան խօսք.

Մեր խօսքը երեք երիտասարդ բանաստեղծների, Եղ. Չարենցի, Ազատ Վշտունու և Գէորգ Աբովի— դեկլարացիայի մասին է.

Իրօք՝ ինչն է եղած հայ բանաստեղծութեան դուրգուրանքի օբյեկտը —Հայրենիք, անբիծ սէր, անապատ ու մենութիւն, մթնշաղներ նրբակերտ, մոռացում ու երազներ և այլն— պատասխանում է մեզ դեկլարացիան.

Եվ դա ճիշտ է.

Հայ բանաստեղծութիւնը լայկանութեան շրջանից չի ազատագրված, նա միշտ մնացել է ազգայնական շրջանակներում որպես կաշկանդված մի փերի. Հայ բանաստեղծութիւնը Փիրդայինների կավի ու Սոլոլակի բարձրաբերձ նացիոնալիզմի ամրոցներից այդին չի անցել.

Հայ բանաստեղծութեան մէջ տեղ է գտել նաև «գիւղական իդիլլան», որ կենցաղային արժէք ունի և հարազատ չէ ընդհանուր առմամբ նրա ամբողջութեան.

Եվ հայ աշխատավորութիւնը սովել է կուլ է տվել իրեն միանգամայն օտար բնագավառի օտար ձգտումների ու ապրումների դառն պտուղները...

Եվ այդ շեշտը վոչ միայն չվերացավ մեծ ապրումների, համաշխարհային տարուբերումների ընթացքում, երբ երկնամբարձ պոետները անմիջականորեն ապրում էին պատերազմական քուրայում, տեսնում ու զգում նրա հազարաւոր զոհերին, հաշմանդամներին,— սալոնական բանաստեղծութիւնը մեծ մասամբ լռեց՝ չտեսնելու երկու դասակարգների մահացու պայքարը.

Եթե հեղափոխութիւնը խճճեց հասարակական ասպարեզում թուչկոտող ժանկլավլիկների հազարաւոր մեքենայութիւնների ցանցը, վերագնահատութեան ենթարկեց անգամ բթացած ինտելիգենցիայի credo-ն,— բանաստեղծութիւնը շարունակեց մուսայի գերում մնալ, կամ խարխափել անգույն ստեղծագործութեան շրջանակում:

Ճիշտ չէ արդեօք, որ «հայ բանաստեղծութիւնը մի թոքախտավոր է», որ ընդունակ է փառաբանելու «նացիոնալիզմ, ռոմանտիզմ, պեսիմիզմ և սիմվոլիզմ»:

Հիվանդը ունի իր զառանցանքը, իր անիմաստ, անգույն խօսքերը.

Հայ բանաստեղծութիւնը հիվանդ էր այնչափ, որչափ հայ իրականութիւնը:

Բանվորա-գիւղացիական հեղափոխութիւնը արեան ու կրակի մէջ հօգով մաքրեց, անկամոնաստից հայ իրականութեան թարախակալած ապաբեգը. Ազատագրված աշխատավոր երիտասարդութեան միտքն ու կամքը պետք է դաստիարակել պրոլետարական ինտերնացիոնալիզմով.

Հուսահատ շեշտը— դեպի անապատները տանող ճամբաները, «մոռացման երազները»— մեկ ընդմիշտ պիտի մոռանալ.

Եվ այս է ամենագեղեցիկն ու ցանկալին, սա է հարազատը ներկա օրերի—դեպի մասսաները, «բազմամարդ ամբոխները».

Երեքի դեկլարացիան անկասկած մի հանգրուան քայլ է, որ կունենա նաև իր հակառակորդները.

Երեքից— գոնե Եղիշե Չարենցը իր համեստ ստեղծագործութեան մէջ կիրառել է «պայքարող դասակարգի մարտական շեփորը».

Եվ դա մեզ ավելի հույս է ներշնչում ենթադրելու, որ պրոլետարական բանաստեղծութիւնը տարուբերումներից դուրս գալով կգտնե իր ճշմարիտ հունը.

Մնում է, որ դեկլարացիայի հեղինակները չտային «դուրս հանել բանաստեղծութիւնը սենեակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից դեպի կենդանի խօսքը».

Եր. Մելիք

Ծանոթ. խմբ.— Հոդվածը դիսկուսիոն է.

Հ. Ս. Խ. Հ. Լուսժողկոմը ընծեռել է նախապատրաստական աշխատանք...

Հավելված 2

Նկար 2: «Երեքը» գրական գրուպայի երեկոն, Խորհրդային Հայաստան, 1922, հուլիսի 11, № 152:

Հավելված 2

# ԳԵՂԱՐՎԵՍՏ

## «ԵՐԵՔԸ» ԳՐԱԿԱՆ ԳՐՈՒՊԱՅԻ ԵՐԵԿՈՆ

Ամսույս 8-ին Երևանի Կոմկուսի ակումբում կայացավ „Երեքը'' գրական գրուպայի առաջին երեկոն։ Սրահը ծայրե ի ծայր լի եր հետաքրքրըվող հասարակութեամբ։

Դասախոսում եր ընկ. Գևորգ Աբովը ,,Հայ բանաստեղծութեան հնանկարները'' նյութի մասին։

Նա բացատրեց, որ բանաստեղծությունը, ինչպես առհասարակ գեղարվեստը արտահայտություն ե վորոշ մի ջավայրի և վորոշ դասակարգի հոգեկան ապրումների։ Ստեղծագործող անհատը կանգնած ե լինում վորոշ տեսակետի վրա (երբեմն անգիտակցաբար) և գեղարվեստորեն պատկերացնում կամ երգում ե նույն դասակարգի ապրումներն ու ձգտումները։

Բանաստեղծութեան ձևը, արտահայտվելու եղանակը բղխում ե բովանդակությունից։ Տվեալ միջավայրը դառնալով բանաստեղծի տաղանդի բովանդակությունը, իր անմիջական կնիքն ե դնում նրա ստեղծագործութեան ձևերի, եղանակի և տեխնիկայի վրա։

Նա ապացուցեց, վոր տնտեսութեան ձևերի մշտնջենական փոփոխութեան հետ փոխվում են նաև մարդկային առօրեայի ձևերը, վորից առաջանում ե ժողովրդի հոգեկան պահանջների համեմատ փոխված պոեզիան։

Անցել են Նարեկացիները իրենց աղոթքների և շարքերի հետ։ Անցել են Թումանեանները իրենց կիսա-ֆեոդալական ու կիսա գիւղացիական միամիտ ապրումների հետ։ Անցնում են նաև Տերեանները, իրենց հետ տանելով ինքնամփոփ, հուսահատ ու հոռետես տրամադրությունները։

Մենք նրանց վրա կնայենք վորպես հնութեան կոթողների վրա, բայց երբեք չենք թույլ տա, վոր նրանք իրենց ընկճված տրամադրություններով ապրեցնեն մեր նոր սերունդը։

Այնուհետև դասախոսը կանգ առավ ներկայումս հայ աշխատավոր մասսաների մեջ առաջող հեղափոխական ու վորոշ տրամադրությունների վրա, ու ելնելով այդտեղից՝ հակիրճ կերպով ուրվագծեց ժամանակակից, ստեղծելիք հայ պոեզիայի բովանդակութեան ու ձևի առանձնահատկությունները։ Նրանց անցնող պոեզիայի տեղ մենք կը դնենք մեր նոր պոեզիան։

Դասախոսությունը վերջացավ բուռն ծափերի տարափի տակ, վորից հետո տեղի ունեցան մտքերի փոխանակություններ։ Արտահայտվեցին ընկ. ընկ. Դրաստամատ, [illegible]ը, Ամիրխանեանը, [illegible]անը և ուրիշները։

Հակաճառողները վողջունելով «3»-ի նոր և մեծ գործի սկիզբը և գրվատելով նրանց ձգտումները, այնուամենայնիվ գտնում եին, վոր հինը բացարձակ անուշադրութեան մատնել չի կարելի։

Վերջում ընկ. Զարենց, Վշտունի և Աբով արտասանեցին իրենց բանաստեղծություններից նմուշներ, վորոնց հասարակությունը ունկնդրեց մեծ բավականութեամբ։ Հասարակությունը ցրվեց լավ տպավորութեան տակ։ Երեկոն ցրվող ունկնդիրների միջև առաջ էր բերել հետաքրքրություն դեպի բանաստեղծությունը և երեկույթից հետո նրանց միջև տեղի էր ունենում վոգևորված վիճաբանություն։

Չի կարելի բացասել, վոր այդ երեկոն Երևանի գրական կյանքի մեջ մտցրեց մի թարմ ու նոր տրամադրություն։

«Երեքը» գրական գրուպայի երկրորդ երեկոն տեղի ե ունենալու առաջիկա շաբաթ օրը։ Վ. Տերեանի մասին խոսելու է ընկ. Զարենցը։

Հավելված 2

Նկար 3: «Երեքը» գրական խմբակի բյուլետին № 1, Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, հուլիսի 11, համար 156:

# ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

## „ԵՐԵՔԸ“ ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԲԻՒԼԵՏԵՆ № 1

Երևանում հուլիսի 8-ին լույս տեսավ «3» բիւլետենը։ Մեր երեք բանաստեղծները՝ Չարենցը, Վշտունին և Աբովը իրանց դեկլարացիան հրատարակելուց հետո, այս թերթի-

...ղ կում երևան են բերում իրենց տեսա...ս կետների արտայայտութիւնը։ Թերթը ...ւ ձեռք առնելիս՝ զգում ենք, որ կան ...ս գնած ենք նոր ձևերի, նոր պատկերա...ս վորումների և նոր բովանդակութիւն...ս ների հանդեպ։

Ազատ-Վշտունին այս թերթում ու...ն ի երեք բանաստեղծութիւններ.— «Զանգ», «Փողոցներ» և „Տոգեկառք“։ Երեքն էլ հետաքրքիր են և կատարե... ապործված տեխնիկայով։

Հեղափոխական Մոսկվայի սիմվոլն է զանգահարը, վոր հնչյունում է զան...գը վորպես համաչխ. հեղափոխութեան մարտակոչ.

Հուր հուզանքով
ու զանգով
դու զանգը զարկ,
զանգը զարկ,
ու զանգը զարկ,
զանգը զարկ...

Շնորհիվ հաճախակի «զ» հնչման, այս բանաստեղծութիւնը վորպես բե...մակ...ն արտասանութեան նիւթ՝ գե...ղեցիկ է և սահուն։

Արժեքավոր է նույնպես Վշտունու «Տոքեկառք»ը. թե նիւթի մասեցում...ով, թե իր շարահիւսութեամբ.

Տոքեկառք, սուրա, սահուն,
սլացիր, սուլիր, անցիր.
Սահմաններ չըկան հիմա,
անծայր է երկիրն անծիր.
Եվ կամ՝

Ու կերգես կանչով հզոր՝
նոր խոսքեր, հուր շեշտ ի հանգ.
Դու կեանքի նվագը նոր,
դու ծնող արվեստ, հեանք։

Հայ բանաստեղծութեան համար նոր են այս բանաստեղծութեան թե քո վանդակութիւնը և թե չափը.

Վշտունու լեզուն էլ իր բանաստեղծութիւնների պես մշակված է, կըտրուկ և շեշտային։ Վորքան էլ վոր Վշտունին անցեալներում գրել է հոռետեսական բանաստեղծութիւններ, սակայն դա չի կարող արգելք հանդիսանալ նրան, վոր այժմ մասաններին տա նոր բանաստեղծութիւններ։ Ճիշտ է, դեռ նա ունի իր պակաս կողմերը՝ իբր բանաստեղծ, սակայն մենք հույս ունենք, վոր հետզհետե այդ բոլորը կվերանան։

Վշտունուց հետո գալիս են Աբովի երկու բանաստեղծութիւնները—«Մարտնչումի ժամին» և «Նախօրեակին»։

«Մարտնչումի ժամին»վոտանավորի մեջ բանաստեղծը պատկերացնում է հակահեղափոխական անցեալը, սիֆիլիտիկ հոգիների ձևով, վորոնք հեղափոխական գրոհի ժամին պլոտի փովեն և դիակնահան փողոցներում և բուլվարներում, իսկ հեղափոխական պրոլետարիատը գրկած զվարթ մանուկին, հաղթական պլոտի անցնի փողոցներից։

Ո՞ւր կը մնա
սիֆիլիտիկ հոգիների ամբոխը խո...
ո՞ւր կը մնա...
մենք հո գիտենք. վոր ծնող է
կամքը մեր կուռ.
մենք հո գիտենք
մեր գրկի մեջ զարթել է մի
զվարթ մանուկ։



Սրանք յաջող և գեղեցիկ ներշնչում ներ են: Հեղափոխական ապրումներ ունեցող բանաստեղծը միայն ընդունակ է գրելու այսպես կուռ, հպարտ տողեր։ «Նախարեականին» վոտանավորով հեղինակը անկեղծորեն խոստովանում է, վոր երեկ, ռեակցիայի օրերին իր—ն տիրել էր թախիծ կամ յոռետեսութիւնը, իսկ հոկտեմբերեան հեղափոխութիւնը նրան փոխել է.

Այն վոր երեկ կար,
[illegible]

…բանաստեղծութիւնները ամ… [illegible] լեզուն առանձ… [illegible]

…ատք է նկատել, վոր Արովը դեռ …աշխիմութեան ճանապարհի վրա է …րա գրվածներից երևում է, վոր նա դեռ վորոնումների և պեղումների …շրջանակի մեջ է գտնվում, այդ մի …ավեղ գրավական է, վոր նա գնալով …ավելի կկատարելագործվի։

Զարենցը տպագրել է «Գեղ» վոտանավորը 3 բիւլետեննում. այդ վոտանավորի մեջ դուք անմիջապես զգում եք վոր գործ ունիք մի շնորհալի բանաստեղծի հետ, վորը ձեզ հետ խոսում է նոր բաների մասին՝ նոր ձևակերպումներով և իւրահատուկ վոճով ու պատկերներով.

…է—կա»—անա ձեզ մի տարօրի… …կ բանաստեղծական նիւթ, այնպես …է—Կայում նստած մի աղջիկ—ըն… …ի հայեացքի մասին է խոսքը։ Եվ …քան տարբեր է Զարենցի արտա…յտման ձևն ու պատկերների գոյնե… մեր հիվանդոտ ու լալկան բանաս…տեղծների վոտանավորներից.

Եվ
դեպի սիրտս հաստատ
արշավում է հայեացքդ
ձի...
եվ ես—
անպգին—
աչքերիդ նժույգին նստած
սըըընթաց թռա մտինդ.

Ընդհանրապես № 1 բիւլետենը թող…ում է ընթերցողի վրա հաճելի տպավորութիւն. Նրանից բուրում է գարնանային թարմութիւն: Եվ վոր ամենագլխավորն է՝ մեր երեք բանաստեղծներն էլ վորքան գրականութեան և պոեզիայի մտնենում են միատեսակ, սակայն երեքն էլ իրանց լեզվով, վոճով, պատկերներով և կառուցվածքով ինքնատիպ են, մեկը մյուսին չեն թարկվող, և սա մեծ առավելութիւն է մեր երեք երիտասարդ պոետների համար։ Ցանկանք նրանց աջողութիւն։

Գ. Վ.

Նկար 4: Խորունի, «Երեքը» և մենք, Խորհրդային Հայաստան, 1922, Հուլիսի 22, № 162:



## „ԵՐԵՔԸ" ԵՒ ՄԵՆՔ

Ինչպես հայտնի է, «Խորհրդային Հայաստանի» էջերում իրենց դեկլարացիայով հանդես եկան երեք բանաստեղծներ—Չարենց, Աբով և Վշտունի։

Մեր ընկերներից շատերին մութն է մնացել նրանց հրապարակ իջնելու պատճառը, և մեր միութեան լայն խավերը հարկ եղածին չափ հիմնավոր կերպով չեն ըմբռնել Երեքի դեկլարացիայի իմաստը։

Այդ տեսակետից գավառներում աշխատող և անցկացնող մեր ընկերները համարեա ավելի անծանոթ և բևեռաբար են մնացել այդ նշանավոր իրադարձութիւնից։

Մեր երիտասարդ ընկերները «Երեք»ի հանդես գալով պետք է շատ գրգռված լինեն, վորովհետև երիտասարդութեան համար այժմեական, ճշմարիտ և նոր բանաստեղծութեան ճանապարհը միմիայն նրանք են ցույց տալիս։

Երեքի մարտական կոչը պիտի արձագանք գտնի մեր մեջ. երիտասարդ սկսնակ գրող ընկերները պիտի անպայման իրենց վրայից թոթափեն հնի փոշին—թողած անապատները, մենութիւնները, թույլ ինտելիգենտին հատուկ նվաղոցները։ պիտի համարձակ իջնեն ամբոխի մեջ, կեանքի ժխորին ձուլվեն ու նոր դարբնվող կեանքը պիտի երգեն, զգալով նրա թե դառնութիւնները և թե պատճառած ուրախութիւնները։

«Երեք»ի դեկլարացիայի գլխավոր նպատակը հենց սրանումն է կայանում. նրքա ճշմարիտ կերպով գտել են, վոր նոր սերունդը վոչ մի օգուտ չի ստանա, եթե շարունակե կրկնել՝

«Հեռանա՜լ... մոռանա՜լ...

Ամեն ինչ մոռանալ...»։

Ասացեք խնդրեմ, ու՞ր է հեռացնում, ու՞ր է տանում մեզ Տերեանը, ինչու է պահանջում մոռանալ ամեն ինչ ու ինքնասպանութեան դիմել։

Ի հարկե, այս հիւանդ հոգու հիվանդ արտահայտութիւն է, մենք չպիտի եղնենք այդ հիւանդ տրամադրութիւններից՝ ինչպես կարծում են շատերը։

Երիտասարդութիւնը պիտի խորը ըմբռնե և հետևի «Երեք»ին և պիտի գիտնա, վոր կեանքից և նրա դառնութիւններից հեռանալը անհնար է անհեթեթութիւն։

Նոր դարբնվող կեանքի համար նոր ու հզոր երգեր են երգում հաղթական կերպով հրապարակ իջած «Երեք»ը—

...դութիւնը, մանավանդ նրա սկսնակ գրողները պիտի արձագանքեն նրանց երկաթե կարմիր երգին։

Խորունի

Հավելված 2

Նկար 5: «Երեքը» գրական գրուպպայի երկրորդ երեկոն, Խորհրդային Հայաստան, 1922, հուլիսի 22, № 162:



# ԳԵՂԱՐՎԵՍՏ

## «ԵՐԻՔԸ» ԳՐԱԿԱՆ ԳՐՈՒՊՊԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԿՈՆ

Ամսույս 20-ի երեկոյեան Երևանի կուսակցական ակումբում տեղի ունեցավ «Երիքը» գրական գրուպպայի երկրորդ երեկոն։ Դասախոսեց ընկեր Զարենցը Վահան Տերեանի մասին։ Դասախոսը սկզբում ընդգծելով այն հանգամանքը, որ Վ. Տերեանը միանգամայն հաջող կերպով կարողացել է իր տրամադրութիւններին համապատասխան բանաստեղծական ձև ստեղծել, անցնում է Տերեանի բանաստեղծութիւնների բովանդակութեան քննութեանը։

Նա մանրամասն կերպով վերլուծեց այն հասարակական պայմանները, այն շրջապատը, որի մեջ սնվել ու դաստիարակվել էր Տերեանը և հիմնավորեց այն տեսակետը, թե Վ. Տերեանը արտահայտիչն է եղել մեր երկրի մանր բուրժուական տրամադրութիւնների ու ապրումների։ Դասախոսը մի շարք հիմնավոր ու անհերքելի փաստերով ապացուցեց, որ Տերեանը սիրային խնդրում մի մաղձոտ է, իր քաղաքական ձգտումներով նացիոնալիստ է, իսկ իր աշխարհհայեցողութեամբ մոտիկ։ Այս տրամադրութիւնները վնասակար գտնելով մեր աշխատավորութեան գիտակցութիւնը կազմակերպելու տեսակետից, նա գտնում է, որ այսօր Տերեանը չէ, որ պիտի բավարարի այդ մասսաների գեղարվեստական պահանջին։

Դասախոսությունից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին մի շարք ընկերներ։

Ըստ էության զեկուցողին հակաճառում էին ընկ. Փիրվերդյանը ու ընկեր Ց. Խանզադյանը, որոնք գտնում էին, թե Տերյանը արտահայտիչն է նաև մեր աշխատավոր դասակարգի տրամադրությունների:

Հակաճառողները Տերյանին պաշտպանելու համար հաճախ հարձակվում էին գործում «Երեքի» դեմ և աշխատում էին ապացուցել, որ նրանք ևս մի ժամանակ հետևողն են եղել Տերյանին։

Բոլոր հակաճառություններին ընկ. Զարյանը պատասխանեց սեղմ ու կտրուկ և մի անգամ ևս ընդգծեց այն հանգամանքը, որ հակաճառողները իրենց ճառերով ապացուցում են թե դեռևս Տերյանի հիվանդություններից չեն ազատագրվել։

Պատասխանից հետո երբ «Երեքը» անցնում են արտասանություններին, բեմ է ելնում լուսժողկոմ ը. Մակինցյանը և հայտարարում.

—Ո՞մ եք ուզում լսել. ուզում եք որ Երեքը կարդան իրենց բանաստեղծությունները, թե ոչ՝ Տերյանինը։

Դահլիճը մի պահ շփոթության մեջ է ընկնում. Սակայն մի վայրկյան անց՝ դահլիճի ավելի մեծ մասը սկսում է որոտընդոստ ծափերով բեմ կանչել «Երեք»ին և լարված ոգևորությամբ լսում է նրանց արտասանությունները։

«Երեք»ի երկրորդ երեկույթը ևս գրավել էր չափազանց հոծ բազմություն և հետաքրքրվողներով լի էին մինչև իսկ միջանցքները։

Լավ կլիներ, որ «Երեքը» այսուհետև իր երեկոները կազմակերպեր ավելի մեծ սրահում։

Դ.

Հավելված 2

Նկար 6: Դ. Գ., «Երեք»-ի երրորդ գրական երեկոն «Շեփորահանդեսը», Խորհրդային Հայաստան, 1922, հուլիսի 27, № 166:



# ԳԵՂԱՐՎԵՍՏ

## «ԵՐԵՔ»-Ի ԵՐՐՈՐԴ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ „ՇԵՓՈՐԱՀԱՆԴԵՍԸ"

Յուլիսի ամսի 23 ին, Սովնարկոմի դահլիճում կայացաւ «Երեք»-ի Շեփորահանդեսը։ Ընկ. Գէվորգ Աբովը բացման խօսքի մէջ բացատրեց «Երեքի» գրական ըմբռնումները և շեշտեց այն հանգամանքը, որ «Երեքը» այսօր հրապարակ են գալիս ցոյց տալու, որ իրենք իրենց ստեղծագործութեան նկատմամբ քննադատական վերաբերմունք ունեն և առաջին անգամն է, որ կոչ են անում հայ ժամանակակից բանաստեղծներին հանդէս գալ և մրցել իրենց հետ, եթէ այդպիսիները կան։ Ապա Չարենցը, Աբովը և Ազատ Վշտունին կարդացին մի շարք բանաստեղծութիւններ, որ ընդունվեցին հասարակութեան կողմից բուռն ծափահարութիւններով։ Պետք է նկատել որ առաջին անգամն էր Հայաստանում հասարակութիւնը այնպես լարված լսում բեմից արտասանվող բանաստեղծութիւններ։ Այս հանգամանքը միայն բավական է ապացուցելու համար, որ «Երեքը» կենդանի երեվույթ են մեր իրականութեան մէջ, կենդանի և կենսունակ։ Արտասանութիւններից հետո հասարակութիւնը թէր և դէմ արտահայտվեց «Երեքի» բանաստեղծութիւնների մասին։ Բոլոր արտահայտվողները էլ վողջունեցին «Երեքի» հանդէս գալը մեր իրականութեան մէջ։

Այս կամ այն փոքրիկ նկատողութիւնը անելուց հետո, բոլոր արտահայտվողներն էլ խոստովանում էին, որ «Երեք»-ի շնորհիվ մեր գրականութեան մէջ մտնում է մի թարմ ու կենսունակ հոսանք։

«Շեփորահանդեսի» գիշերը «Երեք»-ի մրցման կոչը անպատասխան մնաց և դահլիճում նստող երիտասարդ բանաստեղծները վստահութիւն չունեցան հրապարակ գալու։

Դահլիճի հասարակութիւնը հեռացավ միանգամայն գոհ տրամադրութեամբ։

Շեփորահանդեսը վերջացավ գիշերվա ժ. 2-ին։

Ցանկալի է, որ նման հանդեսները կրկնվեն հաճախ։

Դ. Գ.

Հավելված 2

Նկար 7: Հախումյան Տիգրան, Եղիշե Չարենցը (ընկերական բնութագիր), Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, սեպտեմբերի 10, № 205:


ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱ

ԵՂԻՇԵ ՉԱ

(Ընկերական բ



Հավելված 2

# ԱՐՎԵՍՏԱԿԱ՛Ն, ՔՆ

## ՉԱՐԵՆՑԸ

(…Ն բնութագիր)

…մեզ թե նա ինչ է հասկանում երբ ասում՝ և «ռիթմը», վորպես շարժում» «պատկերը», վորպես կենցաղի բնորո-շումն և այլն։ Եվ այստեղ է, վոր նա համակում է ըզգալ և տալիս ընթերցո-ղին իր հոգու և սրտի շարժումները:

«Պոեզո-Զուռնայում» Չարենցը գըտ-նում է իրան և իր իսկական ու հա-րազատ բնաշխարհը։

Անշուշտ Եղիշե Չարենցի հետագա ստեղծագործությունը շատ ուրիշ նվա-ճումներ է անելու, շատ հորիզոննե-րում է թափառելու, սակայն այդ ամբողջը դուրս է ելնելու «Պոեզո-Զուռնայից» և այդ զուռնան է երան-գավորելու նրա ստեղծագործությունը գալիք հեռուներում։ Ի զուր չէր, ու-րեմն, վոր վերացական ու հեռավոր եփորը փոխվեց զուռնայի և այն էլ Չարենցի սիրած ու երգած Զանգուի ափերին։

Ճիշտ է, այդ պոեզաներում բացա-կայում է այն, ինչ կոչվում է «պրո-լետարական, դասակարգային պոե-զիա», սակայն թվում է, վոր Չարեն-ցը այդ նպատակը չուներ էլ երբեք։ Չարենցը տալիս է մեզ մեր արևի կեանքը, նրա զարկերակը և սիրտը։ Նա իր սիրտն է լարել՝ այդ համաշ-խարհային սրտին համակերպ և եր-գում է մեծ երեւույթների մասին։ Բայց նա չի ասում Շուշանիկ Կուր-ղինեանի պես.— «Այդ մենք ենք գա-լիս», կամ Հակոբեանի պես.— «Գոր-ծարան, գործարան, գործարան, դու մեր սուրբ դիրքը և ավետարան...» Նա պոետ է և նա գիտե թե ինչպես կարելի է ամենամեծ և լայնատարած երեւույթների մասին գրել, վոր ամե-նից էլ հարազատ լինի, մոտիկ և հաս-կանալի։ Եվ ահա նրա պատկերները, արևը— զուռնաչի Ալեք, նույն արևը մի գնդասեղ փողկապի վրա, աստղա-զարդ երկինքը— մրգերով լի սինի, սկուտեղ (блюдо) և ամեն տեղ, ամեն տեղ նստած է ինքը՝ փիսացու Վա-

ղոն, գույն ինքը— Չարենցը, և սի-րող ու հարազատ աչքերով նայում է ամենին, ամենին և հնչում է նրա սիրտը— զուռնա արար աշխարհում։

Այսպես կարողանում է նա մոտե-ցնել ամենին իրարու, այսպես կարո-ղանում է նա արեգ տալ մի կաթիլ ջրի մեջ և այսպես է լուծում նա այն խնդիրը, վոր դրեց հասարակության առաջ «Երեքի» դեկլարացիան, ավելի ճիշտը՝ Չարենցի դեկլարացիան, վորով-հետև երեքից միայն մեկը, ինքը Չա-րենցը, կարողացավ իր ուսերին առած բեռը արժանավոր կերպով տեղ հասցնել՝ թեև բավական այլ ձևով, քան այդ սկզբում ծրագրված էր։ Իսկ միւսները...

Բայց ես խոսում եմ Եղիշե Չարենցի մասին և թող այսպես վերջանա իմ ընկերական խոսքը Չարենցին:

Աշխարհում անկրկնելի են վոչ միայն գեղեցկությունը և ճակատագիրը, այլև տաղանդն ու իմաստությունը։ Տվել է քեզ քո բախտը տաղանդ, տվել է և այն խոր իմաստությունը, վոր հողից ելածը հողն է գնում է վոր «կերթա հոգին իմ հուր, մի օր դադար կառ-նի...»

Վառ մնա քո սիրտը— հրկեզ բոլոր հեռուներում և թող փչի զուռնա ամենի սրտին քո սիրած «ավերին Ա-լեքի» պես...

Տիգրան Հախումեա

Հավելված 2

Նկար 8: Փորսուղյան Գ., Կինը Չարենցի պոեզիայում, Խարհրդային Հայաստան, Երևան, 1922, սեպտեմբերի 24, № 216:



# ԿԻՆԸ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

(Քննադատական)

Կինը—Չարենցի ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկն է։

Նրա գրական սկզբնական շրջանում մինչև 17 թ. կինը—նրա գեղեցիկն էր, նրա պաշտամունքը։

Այս պաշտամունքը պարբերաբար փոփոխվել է մի տեսակից մյուսը, կարելի է ասել՝ աստիճանաբար զարգացել է և 17 թ. ենթարկվել է բեկման, հեղաշրջման։

«Երեք երգ տխրադալուկ աղջկան» —իր առաջին գրվածքում Բոդլերների աշակերտ Չարենցը (1914 թ.) կընոջը ճանաչում է իբրև սեռական բընազդի հագեցման գործարան, իբրև մարմին։

Այստեղ նրա ապրումը—ցինիկի սեռական արբեցումն է. կինը—Վեներա է, իսկ սերը—նրա քուրմը։

Հաջորդ գրվածքում—«Կապուտաչյա հայրենիքում» (1915 թ.) Չարենցի կուռքը պոռնկանոցից դուրս է գալիս։ Բանաստեղծը անկեղծորեն ու ռոմանտիկի [illegible] սիրում է իր «կապուտաչյա սիրուհուն», գինով, մրգեղենով, խաղով-պարով «հարսանիքը» տոնում իր սիրածի հետ։

Նրա ապրումը այստեղ—սիրահարված ռոմանտիկի սիրաբորբոք հույզերն են։

Կինը այստեղ «սիրուհին» է, հարսացու, մի Ջուլյետ, վորին Ռոմեո-Չարենցը սիրում է իր վողջ էությամբ։

«Ծիածանում» (1916 թ.) Չարենցը [illegible] է գալիս իբրև միստիկ, իբր՝ Դանթեի, Նովալիսի հետևորդ։ Այստեղ Չարենցը եթերացնում է կնոջը սըրբացնում ու իդեալականացնում նըրան։

Մարմնազուրկ կինը այստեղ մի աբըստրակցիա է, մի գաղափար։ Նա բանաստեղծի «իրիկնային քույրն» է «տառապածավոր աչքերով»։

«Հեզ քույրը» մեռնում է, բայց միստիկ Չարենցի կարծիքով մահը դեպի կյանք, դեպի հավերժություն տանող ճանապարհ է, ահա թե ինչու նա հույս ունի իր «հեզ քրոջից»—

—«Դու իմ հարսը կլինես Անմահ երկրում». «Ծիածան»

Անմահ երկիրը դա անդրշիրիմյան աշխարհն է ըստ իրա, բանաստեղծի [illegible]։

Ինչպես երևում է, Վեներա-Ջուլյետան, այստեղ փոխվել է Բեատրիչեի։

1917 թվին Չարենցը դուրս է գալիս իր մոլորություններից և հեղափոխությունից ազդված՝ ուսումնասիրում մատերիալիզմը, դառնում կոմունիստ։

«Կոմբջիջի աղջկա մեջ» (1922 թ.) Չարենցը թեթև, բայց շատ բնորոշ կերպով շոշափում է կնոջ թեման, վորպես մարքսիստ։

Աշխատավոր գեղջկուհու հոգում նա կարդում է մարդկային հույզ և [illegible] կոլեկտիվի զգացմունքը։

Ուրեմն Չարենցի տված գիծը կնոջ նկատմամբ այս է.—«տխր աղջկան»— «կապուտաչյա սիրուհի» —«իրիկնային քույր», —«կոմբջիջի աղջիկ», այսինքն.

կինը-էգ—կինը-սիրուհի—կինը-իդեալ—կինը-ընկեր։

[illegible]—անցյալի մեշչանական ու վերացական վերաբերմունքից հետո, Չարենցը ամենաառողջ ու իրական հողի վրա կանգնեց կնոջ նկատմամբ։

Դ. Փորսուղեան

Հավելված 2

Նկար 9: Ունկնդիր, Տիգրան Հախումյանի դասախոսությունը Եղիշե Չարենցի մասին, Խորհրդային Հայաստան, 1923, փետրվարի 20, №  36:



# ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Ամսիս 19-ին յերեկոյան ժամը 8 և կեսին Յերևանի Կենտրոնական Բանվորական ակումբի շենքում կայացավ Տիգրան Հախումյանի դասախոսությունը՝ «Յեղիշե Չարենցի ստեղծագործության» մասին։

Դահլիճը ծայր ի ծայր լիքն եր։

Դժբախտաբար նույն այդ գիշերը նույն դահլիճը մի ուրիշ հիմնարկության տրամադրած լինելու պատճառով՝ բանախոսությունից հետո անհրաժեշտ յեղավ զրույցը ընդհատել և ակումբից փոխադրվել Տրոցկու անվան Թատրոնի դահլիճը, ուր և շարունակվեց մտքերի բուռն փոխանակությունը մինչև գիշերվա ժամը 12 և կեսը։

Իր մի ժամ տևող դասախոսության մեջ ընկեր Հախումյանը մոտեցավ Չարենցին, վորպես մի պոետի, վորը հենվելով հեղափոխական անցման շրջանի գորավոր իրականությունը, ստիճանաբար ազատագրվում է մի կողմից հին յերազներից և հին արվեստի տրադիցիաներից և մյուս կողմից՝ կարողանում է ավելի խորը թափանցել հեղափոխական ժամանակների վոգու մեջ և հայտաբերել հոգեբանական այն նորը, վոր յուրահատուկ է դասակարգային գիտակցության և գեղարվեստական սրատեսության ունեցող խոշոր պոետի։

Դասախոսը ցույց տվեց Չարենցի պոետական զարգացման եյական և հիմնական փուլերը — հայրենասիրական-ազգային յերգից դեպի քննադատական և սատիրական վերաբերմունքը այդ արժեքների և իդեաների նկատմամբ։ Այնուհետև գալիս ե հեղափոխական ռոմանտիզմի շրջանը, վորից հետո Չարենցն անցնում է հեղափոխական նոր կենցաղագրության շրջանին և այստեղից հետևում է հոգեբանական նոր մոտեցման շրջանը հին և նոր նյութերին։

Դասախոսը ցույց տվեց, թե ինչպես հետևողականորեն զարգանում է այդ ապատապրման գիծը և ինչպես Չարենցն արագ և հաղթական քայլերով դուրս է գալիս Վահան Տերյանի ազդեցության շրջանակից։ Նրա վերջին շրջանի գործերը՝ սկսած «Ամենապոեմից» արդեն պարզ ապացույց են այն ակնրախ իրողության, վոր Չարենցը հաղթահարել է Տերյանին թե ըստ եյության և թե ֆորմալ տեսակետից։

Մանրամասնորեն կանգ առնելով «Պոեզոզուռնայի» և «Ռոմանս Աներ»-ի վրա՝ դասախոսը շեշտեց, վոր այդ գործերից է, վոր սկսվում է Չարենցի նոր հոգեբանական մոտեցումը իրերին և նյութին և այստեղից է, վոր սկսվում է Չարենցի այն զորեղ հակումը, վորի եյական իմաստն է բոլոր հին կուռքերի տապալումը։

Վերջացնելով իր խոսքը՝ դասախոսը հայտնեց իր խոր համոզումը, վոր Չարենցի պես մի խոշոր և բազմակողմանի տաղանդ յերբեք չի կարող չզգալ ժամանակների հզոր շունչն ու թափը և չտալ մեզ այնպիսի նոր գործեր, վորոնք ավելի են հեղափոխական վոգի և գեղարվեստական արժանիքներ ունենան, քան այն բոլորը, ինչ նա տվել է մեր պոեզիային մինչև այսօր։

Դասախոսությունից հետո արտահայտվեցին մի քանի հոգի՝ բոլորն էլ գրեթե «Պրոլետարական գրողների ասոցիացիայի» անդամներ, ի բաց առյալ ընկ. Արշալույս Տեր. Հովնանյանը և Կարո Հալաբյանը, վորոնք չեն պատկանում այդ կազմակերպությանը։

Հակաճառողները փորձում եյին ապացուցել, վոր նա յեղել է և է՝ մի ինտելիգենտ, վորը միշտ այդպես, վորպես ինտելիգենտ է մոտեցել հեղափոխությանը և վոր նկարագրելով հեղափոխությունը, վորպես «Խելագարված ամբոխների» մի շարժում՝ չի հայտաբերել դասակարգային մի՛ և կուռ ու հաստատ տեսակետ։

Հակաճառողներից վոմանք, Ազատ Վշտունին և Արշալույս Տեր Հովնանյանը (Նո՛ր ֆրոնտ) «ապացուցում» եյին, վոր Չարենցը «բռնացի» կերպով հետևում է Մայակովսկուն։ Սակայն բերած «զորավոր նմուշներից» պարզվեց, վոր հակաճառողները վո՛չ կարդալ գիտեն Մայակովսկուն յեվ վո՛չ ել հասկանալ։

Հակաճառողներից ուրիշները, ինչպես ընկ Դարադյանը և ընկ. Գաբրիելը խոստովանվեցին, վոր նրանք «վոչինչ չեն հասկանում» Չարենցի գործերից և այսպիսով «արժեքավորվեց» նրանց հակաճառության՝ ըստ եյության։ Պարզվեց, վոր կարելի յե դեմ արտահայտվել և առանց հասկանալու։

Ազատ-Վշտունու նկատողությունը, թե Չարենցի «Ամենապոեմը» պատճենն է Մայակովսկու «150,000,000»-ի, ցույց տվեց մի նոր յերեվույթ ստեղծագործական աշխարհում. այն է, — վոր կարելի յե մի գործ գրել ավելի շատ առաջ, քան «150,000,000»-ը և այնուամենայնիվ ազատվել նրանից, այսինքն արտագրել մի գործից, վորը դեռ գրված չեր։

Ընդհանրապես «հակաճառությունները» շատ «գվարթ» անցան և ստեղծեցին այնպիսի տրամադրություն, վորը միակն եր գրական քննադատությունը հաջող կերպով կատարելու համար։

Յերեկոն վերջացավ գիշերվա ժամը 12-ից կես անց՝ Յեղիշե Չարենցի և Տիգրան Հախումյանի պատասխանից հետո։

**Ունկնդիր**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ**

Նկար 10: Հայ ֆուտուրիստների դասախոսություն, Մուրճ, 1923, № 4, էջ 34:



## ՀԱՅ ՖՈՒՏՈՒՐԻՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 19-ին Յերևանում Տիգրան Հախում-յանը կարդաց մի դասախոսություն «Յեղիշե Չարեն-ցի ստեղծագործությունը» նյութի մասին: Նա շեշտեց, վոր Յեղ. Չարենցի «Ռոմանս անսեր»-ը և «Պոեզո-զուռնա»-ն նոր հորիզոններ են բաց անում հեղինակի ստեղծագործության համար:

Դասախոսը հայտարարեց, վոր «Ռոմանս ան-սեր»-ի բովանդակությունը վոչ վոք չի հասկացել, վոր դա մի հեղափոխական գեղեցիկ գրվածք է: Դասա-խոսին առարկեցին հայ պրոլետգրողներ և ունկնդիր-ներից վոմանք: Ընդդիմախոսները ջախջախիչ փաս-տերով ցույց տվին, վոր այդ գրվածքների մեջ չկա վոչ մի հեղափոխական կամ պրոլետարական վոգի: Դասախոսությունից մի որ հետո «Խորհրդային Հա-յաստան» թերթի էջերում տպագրվեց մի տենդենցիոզ և գովասանական հոդված «Ունկնդիր» ստորագրությամբ: Պարզվեց վոր հոդվածագիր «Ունկնդիր»ը հենց ինքը դասախոս Տիգրան Հախումյանն եր: Ահա ձեզ մի նմուշ ֆուտուրիստական գրական «էտիկա»-յի: